

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ՎԱՏԻԿԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ

Մ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, է. Խ. ԹԱԶԻՐՅԱՆ

1994 թ. ամռանը, Վենետիկի Կա՛նոնական Տաճարային Համալսարանի հրավերով շորս ամիս գտնվելով Իտալիայում, հնարավորություն ստացանք աշխատելու իտալական արխիվներում: Նույնպիսի հնարավորություն մեզ ընձեռվեց նաև 1996—1997 թթ. ձմռանը¹:

Իտալիայում մեր աշխատանքը հիմնականում ընթացավ մի քանի խոշոր արխիվներում, որոնք հայտնի են նաև որպես հայկական փաստադրական նյութի հսկայական պահուցներ ղեռ վաղ ժամանակներից: Բայց ալժմ խոսենք դրանցից երկուսի մասին:

Այդ արխիվների շարքում կարևոր դեր ունի «Վատիկանի գաղտնի արխիվը» (Archivio Segreto Vaticano, այսուհետև՝ ASV): Հռոմի Ս. Աթոռի այս եղակի պա՛հուցը հանդիսանում է աշխարհի խոշորագույն արխիվներից մեկը: Այն պաշտոնապես համարվում է հիմնված 1610 թ. Պոպոս V պապի (1605—1621) կողմից: Հետագայում Բորջիանների օրոք արխիվը դառնում է նաև անկախ ինստիտուտ՝ Վատիկանի կառույցներում: Սակայն արխիվի պատմությունը իր արմատներով շատ ավելի խորքերն է դնում՝ մինչև Հռոմի եկեղեցիի հիմնադրման և ձևավորման ժամանակները: Դարերի ընթացքում այն շարունակաբար համարվել է ամենաբազմաբնույթ ու տարբեր բնագավառների վերաբերյալ հետաքրքրական ու անդտանելի նյութերով, որոնց ուսումնասիրման համար ստեղծվել է նաև առաջին Եվրոպայում ամենահին ինստիտուտներից մեկը՝ Վատիկանի արխիվի Զեռագրագիտության և Կոդիկոլոգիայի ինստիտուտը, որը ղեկավարում արդեն մոտ մեկ դար, բազում շարքերով լույս է ընծայել հարյուրավոր հատորներ: Սա շատ կոզմերով նրան առանձնացնում է այլ արխիվներից:

Հայտնի է, որ դեռ XX դարի առաջին քառորդի վերջին կարգինայ Ե. Տիսսերանի կողմից կազմակերպվեց Վատիկանյան ձեռագրացուցակների կազմումը և հրատարակումը: Այդ շարքում Կոնիեների աշխատակցությամբ նկարագրվեց և առանձին հատորով լույս տեսավ Վատիկանի դրագարանի հայ-

¹ Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Վատիկանի արխիվի նախկին տնօրեն (պրեֆետ) դեր. Յոզեֆ Մեցլերին, ներկայումս տնօրենի պաշտոնակատար դեր. Սերժիո Պաղանյին, ղլխավոր արխիվագետ, Արևելյան եկեղեցիների պատմության նշանավոր մասնագետ, դեր. Գ. Մ. Կրոչին, Կնիքների ուսումնասիրման բաժնի ղեկավար, Կնիքագիտության միջազգային ասոցիացիայի նախագահ, դեր. Ալդո Մարտինին, Վենետիկի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հ. Լ. Զեբյանին՝ արխիվում աշխատելու ժամանակ մեզ ընդառաջելու և մեր աշխատանքներին օժանդակելու համար: Հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը նաև Գալուստ Գուրենկյան հիմնադրամի Հայկական բաժնին՝ արխիվներում պատճենահանումների ձեռք բերման գործում մեզ օժանդակելու համար:

² Վատիկանի արխիվի պատմության ու ֆոնդերի նկարագրությունը մանրամասն տե՛ս Archivio Segreto Vaticano. A cura di Terzo Natalini, Sergio Pagano, Aldo Martini. Firenze: Edizione per l'Archivio Segreto Vaticano, 1991, ուր (էջ 251—258) բերված է է արխիվի մասին հիմնական դրականությունը:

կական ձեռագրերի ցուցակը³։ Սակայն մինչ այժմ չուսումնասիրված է մենում Վատիկանի արխիվներում ամբարված հսկայական հայկական վավերագրական նյութը։

Ստորև նշում ենք Վատիկանի արխիվի համեմատաբար խոշոր այն ֆոնդերը, ուր պահվում են նաև հայոց միջնադարյան և նոր շրջանի պատմության վերաբերյալ ամենատարբեր նյութեր ու փաստաթղթեր։

Camera Apostolica (Fondo Camerale) (2530 հատոր—ընդգրկում է XIII—XVIII դարերը),

Archivium Arcis, I—XVIII — (բաղկացած է 6722 հատոր մագաղաթյա և թղթյա փաստաթղթերից),

Armadio XXX—LXIV (մոտ հազար հատոր—XII—XVII դարերի պապերի փաստագրական ժառանգության պատճեններ, զանազան արձանագրություններ, միսիոներական զեկույցներ և այլն),

Epistolae ad Principes (298 հատոր, պապական քարտուղարի ձեռքով ժամանակագրորեն զրառված են 1560—1969 թթ. պապերի ուղարկած և ստացած բոլոր նամակներն ու գրությունները։ Այս ֆոնդում կարելի է տեսնել վերոհիշյալ թվականների հայ կաթողիկոսների, պատրիարքների և բազում եպիսկոպոսների կողմից ուղարկված նամակների լատիներեն կամ իտալերեն թարգմանությունները),

Borghese I—IV (2004 հատոր—1542—1737 թթ.)։ Այս ֆոնդում են պահվում XVII դարի սկզբի Արևելյան Հայաստանում և Պարսկաստանում ծավալվող քաղաքական իրադարձությունների, Շահ Աբասի կողմից Արևելյան Հայաստանի բնակչության աննախագեղ բռնազաղթի մասին ականատեսների (կարմելիտյան, ավգուստինյան և այլ միսիոներներ) կողմից զրբված և առաջնակարգ հետաքրքրություն ներկայացնող զեկույցներ, Շիրվեյ հղբայրների և խոջա Սաֆարի եվրոպական դեսպանության նյութերը և այլն։

Carpegna (237 հատոր—1655—1730 թթ.), այս ֆոնդում պահվում են պապերին տարբեր վայրերից, ընդհուպ մինչև Հնդկաստանից և Զինաստանից ուղարկված նամակների բնագրեր, դավանական բովանդակության փաստաթղթեր, Պրոպագանդա Ֆիդելի տպարանում տպված հայերեն հնատիպ դրքեր⁴ և այլն),

Minutae Brevium Lateranensium (469 հատոր—փաստաթղթերը վերաբերում են 1523—1599 թթ.),

Segreteria di Stato — (Վատիկանի պետական քարտուղարության զրադրությունը պարունակող այս ֆոնդը բաղկացած է մի քանի տասնյակ ենթաֆոնդերից, որոնցից յուրաքանչյուրում պահվում են հարյուրավոր հատորներ, օրինակ այս ֆոնդի միայն Principi ենթաֆոնդը ընդգրկում է 1500—1815 թթ. վերաբերյալ 234 հատոր փաստաթղթեր, Polonia ենթաֆոնդը (տե՛ս լեհահայոց պատմության ուսումնասիրման համար) ընդգրկում է 1599—1834 թթ. վերաբերյալ 421 հատոր, կամ Venezia ենթաֆոնդը ընդգրկում է 1524—1807 թթ. վերաբերյալ 422 հատոր)

Segreteria di Stato, epoca moderna — (9380 հատոր—1814—1922 թթ.)։

³ Տե՛ս Codices Armeni Bibliothecae Vaticanae Bogiani Vaticani Barberiani Chisiani, schedis Frederici Cornwallis Conybeare adhibitis, recensuit Eugentius Tisserant. Città del Vaticano, 1927, pp. XIX, 395։ Վատիկանի արխիվի հրատարակված փաստաթղթերի շարունակական մատենագիտությունը տե՛ս Bibliografia dell'Archivio Vaticano, Vol. I—V, Città del Vaticano, 1962—1992.

⁴ ASV, Carpegna, Vol. 55, կա երկու հայերեն հնատիպ դիրք տպված Հոռմի Հավատապիտու ժողովի տպարանում՝ ա) ff. 359—373—Դաւանութիւն ճշմարիտ եւ ուղիւղափառ հաւատոյ վասն առնելոյ եկեղոցն յարեւելից. Professio orthodoxae fidei ab orientalibus facienda. Ivssu SS. D. N. Urbani PP. VIII edita. Romae, MDCXLII. բ) ff. 375—398.—Դաւանութիւն ուղղափառի հաւատոյ ի յամենից հայոց առնելի, MDCLXXVIII. Այս հա-

Արխիվում հայոց վերաբերյալ մեր տեսած և պատճենած ամենահին փաստաթղթերը վերաբերում են Կիլիկիո թագավորական ժամանակաշրջանին: Իրանք սյահվում են հատկապես *Registri vaticani* (բաղկացած է 2020 + 27 հատոր փաստաթղթերից, որոնք ընդգրկում են 876—882, 1073—1085, 1198—1605 թթ.), *Archivium Arcis, Ann. 1—XVIII* և *Instrumenta Misceanea* (բաղկացած է 8000 հատորում կազմված, մեծ մասամբ մագաղաթյա փաստաթղթերից, որոնք ընդգրկում են XI—XX դարերը) ֆոնդերի հատորներում:

Փաստաթղթերի մեջ իրենց եղակիությամբ առանձնանում են Կիլիկիո լեոն I թագավորի ոսկե կնիքով նամակը, գրված 1216 թ. և ուղղված Բյուզնդիոս II պապին, Կոստանդին Բարձրերդցի (1220—1267) կաթողիկոսի մագաղաթե մեծագիր 1225 թ. դարդանախշ նամակը Հռոմի պապին, ուղարկված պապական Իմանշ լեգատի ձեռքով («Իր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, զոր խնդրեաց ի մէնջ առաքելական հայրն մեր պապն Հռոմայի նոյնցունցն ի ձեռն խոհեմագոյն ի պին, փրէր Տիմանշին, որ է ի կարգի փրէր մնուրացն»⁵):

Պակաս հետաքրքիր չեն հայոց պատմության XV—XVIII դարերի վերաբերյալ նյութերը: Բազում ֆոնդերում ցրված են հայոց պատմության այս կամ այն իրավագիտ., հայ ազգային ազատագրական շարժման, հայկական դադթոջայտների, հայ կաթողիկ համայնքների, հայ մշակույթի պատմության, հայ զբոսի սուլադրության վերաբերյալ հազարավոր փաստաթղթեր:

Այսպես, *Vescovi* ֆոնդում պահվում են Ռսկան Երևանցու 1668 թ. նոյեմբերի 15-ի ինքնագիր շնորհակալական լատիներեն նամակները Ամատերդամից Կղեմես VIII պապին: Հայտնելով, որ արդեն ավարտվել է Աստվածաշնչի հայերեն հրատարակությունը, ուղարկում է պապին տպագիր օրինակներից մեկը, աղերսելով ողորմածության արժանի դարձնել «թուրքերի լծի տակ ճնշված իմ հայ ազգին»⁶: Նույն ֆոնդում են պահվում Հակոբ Զուլպույցու 1666 թ. հոկտեմբերի 12-ի մեծագիր նամակը պապին, ուր շնորհակալություն հայտնելով իրեն նվեր ուղարկած սկիհի համար, խնդրում է, որ սրապի կողմից զբաղվի Հիսուսյան, Նիկոլ Թորոսովիչին, այն մասին, որ «սուհույն վեկեղեցիսս մերով նախնական աւանդութեամբ որպէս որ կացեալք են մինչև ցայս վայր»⁷, Երուսաղեմի Սուրբ Հակոբի վանքի պատրիարքական փոխանորդ Հովհաննես Լալիսկոպոսի 1686 թ. նամակները պապին և Վատիկանի պետական բարտուղար կարդինալ Զիպույին, Սիջերկրական ծովում ծովահենների կողմից Պոլսից Երուսաղեմ ուղևորվող մոտ 200 հայ ուխտավորներով նավերի թալանման վերաբերյալ խնդրելով պապի միջնորդությունը ևս ստանալու համար իրենց ապրանքներն ու իրերը⁸:

տորում սյահվող հետաքրքիր փաստաթղթերից է Հակոբ Զուլպույցու կողմից 1679 թ. սեպտեմբերի 23-ին Կ. Պոլսից գրած նամակի լատիներեն թարգմանությունը, արված Նախիջևանի հայ կաթողիկ արքեպիսկոպոս Առաքել Շոռոթնցու, կամ Բոբիկի ձեռքով (նույն տեղում, ff. 399r—400r):

⁵ *SH' A* ASV, A. A. Arm., 630. Այս հաղվագյուտ կնիքը հայագետներին առայժմ հայտնի է Վատիկանի արխիվում պահվող օրինակներով: Կնիքի լավագույն հրատարակությունը տե՛ս *Martini A. I sigilli d'oro dell'Archivio Vaticano, con una nota storica di Mons. Martino Giusti, prefazione di Alessandro Pratesi, Milano, 1964; Հմմտ. հասկ. C. Mutter, f. l. n. Le Royaume Arménien de Cilicie XII—XIVe siècle. Paris; CNRS, 1993, p. 49.*

⁶ *ASV, A. A. Arm., 1804*, փաստաթղթի քննությունն ու հրատարակությունը տե՛ս Ա. Բոգոյան. *Հայ-բյուզնդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165—1178)*, Երևան, 1995:

⁷ *ASV, Vescovi, vol. 35, ff. 162r, 163r.*

⁸ *ASV, Vescovi, vol. 52, f. 503r.*

⁹ Հայերեն բնագրերը տե՛ս *ASV, Vescovi, vol. 73, ff. 144r, 145r*, ժամանակի լատիներեն թարգմանությունը արված է նշանավոր Բազիլիոս Բարսեղի ձեռքով (տե՛ս նույն տեղում, ff. 148r):

8 «Հանդես», № 1

Տարբեր ֆունդերում հանդիպում են մեծ քանակությամբ վավերագրեր, որոնք վերաբերում են Կ. Պոլսի, Ախալցխայի, Նախիջևանի հայ կաթոլիկ համայնքների պատմությանը: Առանձնապես հետաքրքիր են Ավգուստին Բաօեցու, Առաքել Շոռոթեցու, Պետրոս Պետիկի, Սեբաստիան Քնաբի, Գրիգոր Սորոթոբեցու և այլոց տարբեր տարիներին գրված նամակներն ու զեկուցադրերը, որոնք անփոխարինելի աղբյուրներ են Նախիջևանի, Արևելյան Հայաստանի ու շրջնադարյան պատմության ուսումնասիրման համար:

Վատիկանի արխիվում ուշադրության արժանի է հատկապես հայկական կնիքների մեծ քանակությունը, որը ևս մինչ այժմ մնում է շուտամոռացիկ:

Հայոց պատմության նորագույն շրջանի վերաբերյալ արխիվի հավաքածուի այն մասը, որ մեզ հաջողվեց տեսնել, նույնպես հետաքրքիր է: Հատկապես ուշագրավ են Բենեդիկտոս XV պապի (1914—1922 թթ.) կողմից Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին Պոլսի (Անշելո Մարիա Դոլլի)¹⁰ և Բեյրութի (Ֆրեդիանո Զիանինի) առաքելական պատվիրակությունների (Delegazione Apostoliche) ֆունդերը:

Պոլսում 1914—1923 թթ. պապական առաքելական պատվիրակ, հետագայում կարդինալ, գերապայծառ Անշելո Մարիա Դոլլի (1867—1939 թթ.) բազմահատորանոց գործը կարևոր աղբյուր է հատկապես հայոց ցեղասպանության, Հայաստանի Առաջին Հանրապետության սլատմության ուսումնասիրման համար: Կաթոլիկ եկեղեցու զանազան թևերին պատկանող կրոնավորների (բավական է ասել, որ վերջիններս իրենց թվով գերազանցում էին Օսմանյան կայսրությունում ցանկացած դեսպանատան աշխատակիցներին և սփռված էին կայսրության տարածքով մեկ), միսիոներների (Հիսուսյաններ, ֆրանցիսկյաններ, լազարիստներ և այլն), ինչպես նաև հայ կաթոլիկ հոգևորականների ականատեսական վկայությունները նոր լույս են սփռում Հայոց Մեծ Եղեռնի ուսումնասիրման գործում և օգնում են լուսաբանելու բազում մութ մնացած հարցեր: Ցեղասպանության տարիներին Հռոմի եկեղեցու որդեգրած հումանիստական դերը ճիշտ գնահատելու համար այս փաստաթղթերը եզակի են: Կարևոր արժեք է ներկայացնում Հայոց պատմության նորագույն շրջանի ուսումնասիրման աղբյուրների շարքում ցարդ չընդգրկված այդ տարիներին Պոլսում հրատարակվող «Bulletin du Vicariat apostolique de Constantinople» ամսագիրը:

Պապական առաքելական նվիրակ Ա. Մ. Դոլլիի զործունեությունը, որն անմիջականորեն ղեկավարվում էր Վատիկանի պետական քարտուղար (իմա՝ արտաքին հարաբերությունների նախարար) կարդինալ Պիետրո Գասպարիի ցուցումներով, շատ բարձր է գնահատվել ժամանակի պոլսահայ մամուլում¹¹:

Իրականում գերապայծառ Ա. Մ. Դոլլիի զեկուլյցներն էին այն փաստական հիմքը, որի հիման վրա գրվեցին հայկական ջարդերը կասեցնելու վերաբերյալ սուլթանին ուղղված պապի երեք ինքնագիր բողոքները: Զպետք

¹⁰ Ա. Մ. Դոլլիի մասին տե՛ս Giuseppe de Marchi, Le nunziature apostoliche dal 1800—1953. Pre azione di S. E. Mons. Antonio Samoré, Roma, 1957 (Studi Eruditi 13), pp. 71, 205, 225; պապական առաքելական պատվիրակությունների մասին տե՛ս նաև D. Staffa, Le delegazione apostoliche, Roma—New York, 1959

¹¹ Բավական է մեջբերել Կ. Պոլսի «Վերջին լուր» թերթից մի հատված, որը տպագրելով պապի և Դոլլիի նկարները, գրում է. «...Մոնս. Տոլլիի տնտեսը կապված է հայ տառարանին պատմության սկզբից այն ժամանակամիջոցներ, երբ էնկուրիի հայկական ջարդին լուրը առնելով հանկարծ կը դիմեր իթթիհատական դահլիճին ուժգին կոչով և դոնե կը հաջողեր բեկորներ խլել Թալեթի և էնվլիի մարդասանձ կլափեն: ...Մոնս. Տոլլին հարյուրավոր հայեր աղատեց աքսորանքի, մայրաքաղաքի հայությունը գիտե՞ արդյոք, թե ինչ՞ կը պարտի այս առաքյալին, որ վերջին պահուն Պապի հայությունը, միմիայն իր ջանքերովը աքսորե և ջարդի աղատեց: Ասա շատեր աղատեց մահվան ճիւղներին, զնդակահարության և կախաղանի վճիռներին» («Վերջին լուր», 1921, 20 հունվարի № 2080, հմտ. «Երևան», 1919, 30/13 հունիսի, № 30—36, «Նոր կյանք», 1918, 21 նոյեմբերի, № 34):

է մոռանալ, որ Դուլին եղավ առաջիններից մեկը այն օտարերկրյա դիվանագետներից, որ հրապարակավ բողոքի ձայն բարձրացրեց օսմանյան կառավարիչների առջև արևմտահայերի համընդհանուր ջարդերի դեմ: Կ. Պոլսում նրա մեծ ջանքերի շնորհիվ կազմակերպվեց Բենեդիկտոս XV անվան առաջին հայ որբանոցը, ուր կարողացավ նույնիսկ փաշաների հարեմներից հավաքել հայ որբերին, որոնց թիվը անցնում էր 300-ից¹²:

Ա. Մ. Դուլիի ֆոնդում է պահվում նաև Կ. Պոլսում Հայաստանի Հանրապետության լիազոր-ներկայացուցիչ Թահթաջյանի և Գերմանիայում Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ Դրինֆելդի ցարդ անհայտ մնացած գրադրությունը: Իրականում, 1923 թ. Փարիզ սեկսիուց առաջ, չկարողանալով այն տանել իրենց հետ, այս արխիվը դիվանագիտական միսիայի ղեկավարների կողմից գերադասվել է հանձնել Ա. Մ. Դուլիին, քան թողնել Խուրքիայում:

Կ. Պոլսում Հայաստանի Հանրապետության լիազոր-ներկայացուցիչ դրադրությունների մեջ հատկապես տպավորիչ են Հայաստանի Հանրապետության լրիտասարդ բանակին օգնելու համար հայ զաղթօջախներում ծավալված շարժման մասին փաստաթղթերը: 1919—23 թթ. ընդգրկող այս փաստաթղթերը վկայում են այն կազմակերպված աշխատանքի մասին, որ կատարվեց հայ զաղթօջախներում հայոց բանակին օգնելու համար: Կազմակերպվեցին «Հայկական բանակի նվիրահավաք կեդրոնական մարմին» (հասցեն րստ պաշտոնաթղթի՝ «Պոլիս, Ալեանաք խան, թիվ 6»), որի հասցեով էր ուղարկվում հայոց բանակի համար սփյուռքում հավաքված ողջ օգնությունը: Այնուհետև Թահթաջյանի օգնությամբ նավով այն ուղարկվում էր Բաթում, որտեղից էլ երկաթգծով՝ Հայաստան: Բավական տպավորիչ ու հուզիչ են հավաքված հանդանակություններին ուղեկցող նամակները՝ Մարսելից, Փարիզից, Իզմիրից, Հալեպից, Ալեքսանդրիայից և այլ վայրերից, որոնց տակ դրված են շատ ու շատ նշանավոր հայորդիների ստորագրություններ: Այսպես, «Հայ սպայից միություն» կողմից Իզմիրից Թահթաջյանին Ս. Աշճյանի և Ա. Թումաճյանի կողմից ուղարկված դրությամբ խնդրվում է «կարելի էղածին շափ շուտ մը Երևան դրկել» իրենց օգնությունը հայոց բանակին՝ 433 պուլգ դուլպա, 1360 զույգ բրդե գուլպա և մի քանի օրից ուղարկվելիք 1000—1500 ոսկին: Նույն բովանդակության նամակներ կան Շահան նաթալիից և Արդուսյանից (Իզմիր), Շիրվանզադեից, Զապել Սալանից (Աթենք), Ավետիսյան եղբայրներից (Իզմիր), Զարեհ Թորոսյանից, Փարիզի նշանավոր լուսանկարիչ հայազգի Աբելից իր իսկ նկարած բացիկով՝ «Hommage de la Republique Armenienne- au soldat inconnu» մակագրությամբ: 1919 թ. դեկտեմբերի 22-ի մի գրությամբ հայտնվում է, որ Նշան Գորոյանը «փափաղելով օդատար լինել մեր մանուկ հանրապետության—կը փափաքի իր սեփական շարժուն խոհանոցը իր ամբողջ կազմածով հայկական հերոս բանակին նվիրել»: Համաձայն 1920 թ. մարտի 10-ի «Հաշվեցույց Կ. Պոլսո հայ բանակի նվիրահավաք կեդրոնական մարմնո միջոցով հավաքված և հայկական հանրապետության Կ. Պոլսո դիվանագիտական ներկայացուցիչ պարոն Թահթաջյանի ձեռամբ Հայկական Հանրապետության պատերազմական նախարարության ուղարկված իրեղեններ», որ կրում է Արաքսի Դ. Վարուժանի, Դ. Էլնաթյանի, Ե. Հովնանյանի և այլոց ստորագրությունները, Երևան են ուղարկվում գլխարկներ, կերպասներ, գուլպաներ, շապիկներ, ածելի, «չորս գուլգ զործածված կոշիկ» և այլն: 1920 թ. օգոստոսի 25-ի իր գրությամբ (համար 802) Թահթաջյանը դիմելով Հայոց Բանակի նվիրահավաք կենտրոնական մարմնին հաղորդում է. «Հան-

¹² Որբանոցի և որբերի հետագա ճակատագրի մասին տե՛ս նաև Opera del Santo Padre Pío XI per le Orfanelle Armerie. Raccolte nel Palazzo Pontificio di Castel Gandolfo 19 Dicembre 1922—31 Agosto 1923. Biella, 1924; [J. Nazlian]. Les premières de Mgr. Jean Nazlian, évêque de Trebizonde. Vol. I—II, Vienne, 1955.

գուցյալ Ձոհրապի այրին, տիկին Կլարան, նվիրել է հայ համալսարանին իր ամբողջ գրադարանի մի մասը, տեղավորելով այն երկու սնդուկների մեջ, որոնք գտնվում են իրենց բնակարանում, գերմանական դեսպանատնից քիչ վարը։ Նվիրել է նույնպես հարյուր հատորի շափ գրեանք (բժշկական)՝ հանգուցյալ բժիշկ Տաղավարյանի այրին և այդ գրքերը գտնվում են բժիշկ Սասիսի մոտ։ Երկու նվերների ցուցակները ստացել և ուղարկել եմ Երևան»։ Այս նամակով Թադևրյանը խնդրում է ստանալ այս նվերները, բեռնել Բաթում մեկնող շոգենավը և հասցնել Երևան։ Իր անձնական գրադարանը Հայաստանին է նվիրում նաև պոլսահայ նշանավոր մտավորական Հակոբ Հակոբյանը։ Հայոց Բանակի համար իրենց հանգանակած գումարները խնդրում են Երևան հասցնել Պոլսի «Ազատամարտ» (276 ու կես ոսկի), «Նոր Այգ» և այլ պարբերականներ։

Դուլչիի ֆոնդում են պահվում նաև Ավետիս Ահարոնյանի, Խատիսյանի, Վրացյանի, Նազարբեկյանի մի շարք գրություններ՝ հայկական բանակը սփյուռքի հայ երիտասարդներով համալրելու մասին առաջարկով (1920 թ. սեպտեմբերի 30, բնագիր), Զանգեզուրի, Ղարաբաղի և Նախիջևանի իրադարձությունների մասին (նամակներ և հեռագրեր՝ 1921 մայիսի 14, հունիսի 23, հուլիսի 13 և այլն)։ 1920 թ. հունիսի 3-ի գրությամբ, Հայաստանի Հանրապետության արտգործնախարարության պաշտոնաթղթի վրա, Ավետիս Ահարոնյանը գրավոր շնորհակալություն է հայտնում Պոլսի հայկական ներկայացուցիչները՝ «մեր հերոսական բանակին օգնության գալու համար, բոլոր գաղութներում այս շարժումը կազմակերպելու համար»։ Կա համանման բովանդակությամբ նամակ նաև Խատիսյանից։

* * *

Վատիկանի հայկական վավերագրերի հաջորդ խոշորագույն պահոցը, ուր մեզ հաջողվեց աշխատել, դա «Հավատասփյուռ Ժողովի» (Propaganda Fide) պատմական արխիվն է։ Այս արխիվի նյութերը սկզբնավորվում են Հռոմի Գրիգոր XV պապի կողմից 1622 թ. Հավատասփյուռ Ժողովի հիմնումից¹³։ Այն վերաբերում է հատկապես Ասիայի, Աֆրիկայի և Օվկիանիայի ժողովուրդների մեջ միսիանների տարածմանը, վերջիններիս պատմությանը, կրոնին ու մշակույթին¹⁴։ «Վատիկանի գաղտնի արխիվի» համեմատությամբ այս արխիվում աշխատել են մի շարք հայագետներ, որոնցից շատերի կողմից հրապարակ են բերվել մի շարք հայագիտական կարևոր աշխատանքներ։ Հատկապես հիշատակելի է Մխիթարյան Միաբանության անդամներից Գ. Գալեմբեարյանի, Ն. Ակիսյանի, Պ. Անանյանի, Կ. Ամատունու, ծագումով լեհահայ, Հռոմի Լեոնյան վարժարանի հոգևորականներից հ. Գր. Պետրովիչի, հայտնի մտավորական Հ. Քյուրտյանի և ուրիշների գործերը։ Դրանցից առանձնանում են այս արխիվում մոտ տաս տարի շարունակ գիտական հետազոտություններով զբաղված Վենետիկի Մխիթարյան Միաբանության վերջերս մահացած Աբբահայր Ս. վ. Ճեմճեմյանի աշխատանքները, որոնք լույս տեսան «Բազմավեպի» մատենաշարով։

13 Հավատասփյուռ Ժողովի հիմնադրման, գործունեության ուղիների ու ծավալման մասին տե՛ս Sacrae Congregationis de Propaganda Fide memoria rerum. 350 anni a servizio delle Missioni 1622—1972. Cura et studio J. Metzler edita, vol. I I, 1622—1700. Rom—Freiburg—Wien: Herder, 1971.

14 Հավատասփյուռ Ժողովի պատմական արխիվի ուղեցույցը տե՛ս N. Kowalsky—J. Metzler. Inventory of the Historical Archives of the Sacred Congregation for the Evangelization of Peoples or „De Propaganda Fide“. New enlarged Edition, Roma: Pontificia Universitas Urbaniana, 1983 (Studia Urbaniana, 18).

Հավատաստիւոս ժողովի պատմական արխիվում հայագետներին առավել հետաքրքրող ֆոնդերից են.

ա) Acta Sacrae Congregationis (Acta) — Հավատաստիւոս ժողովի ակտերու Այս ֆոնդում պահվում են 1622—1892 թթ. ընդգրկող ժամանակաշրջանին վերաբերող 345 հատոր, ուր ամփոփված են Հավատաստիւոս ժողովի նիստերի արձանագրություններն ու որոշումներն ըստ տարիների: Յուրաքանչյուր հատորին համապատասխանում են SOCG-ի մեկ, կամ հաճախ ավելի հատորներ, ուր պահվում են այն բնագրերը, որոնց կապակցությամբ տեղի է ունեցել նիստը և կալաքվել է որոշում: Հավատաստիւոս ժողովի հայերին վերաբերող բոլոր քննարկած հարցերը և պաշտոնական որոշումները կարելի է դտնել ժամանակագրորեն դասակարգված այս հատորներում: «Ակտա»-ների բոլոր հատորներում եղած հարուստ հայագիտական նյութը տարիների ընթացքում շատ բարեխղճորեն քարտադրվել է Կ. Ամատունու կողմից, որի ողջ քարտարանը անտիպ վիճակում պահվում է Վենետիկի Մխիթարյան Միաբանության դիվանում:

բ) Scritture Originali riferite nelle Congregationi Generali (SOCG) — Գլխավոր ժողովին հասցեագրված նամակների բնագրերն են՝ դասակարգված ըստ ծրարների—1044 հատոր (ընդգրկում է 1622—1892 թթ.):

գ) Congregazioni Particolari — 1622—1864 թթ. վերաբերյալ 161 հատոր:

դ) Scritture Originali riferite nei Congressi (SC) — Հավատաստիւոս ժողովին ուղղված, բայց հաճախ չբնութկված ու չպատասխանված նամակներ—1451 հատոր: Այբրեկական կարգով, ըստ տեղագրության դասակարգված այս ֆոնդում հայերի վերաբերյալ եթե կամի ամբողջական բաժին (Armeni), որը բաղկացած է 1430—1892 թթ. վերաբերող 44 հատորից, ապա Հայոց պատմության համար ոչ պակաս հետաքրքիր են հետևյալ բաժիններում պահվող փաստաթղթերը՝ Georgia—1626—1863 թթ. վերաբերյալ 7 հատոր, Mesopotamia, Persia, Caldei—24 հատոր (1614—1892 թթ.), Constantinopoli—42 հատոր (1663—1892 թթ.), Smirne—9 հատոր (1667—1892 թթ.) և այլն:

Հետաքրքիր են նաև որոշ ֆոնդեր, ուր պահվում են հայ դպրոցախններին վերաբերյալ փաստաթղթեր, այդպիսիք են. ա) Moscovia, Polonia, Rutheni.— 34 հատոր (1624—1892 թթ.), բ) Ungheria e Transilvania,— 8 հատոր (1622—1892 թթ.), գ) Indie Orientali, Cina—40 հատոր (1623—1899 թթ.) և այլն: Կարևոր փաստաթղթեր են պահվում նաև այս ֆոնդի հավելվածներում (Miscellanea): Այսպես, SC Armeni, Miscellanea XXXVI bis հատորում պահվում է XVIII դարից շարք կորած համարվող Միքայել Չամչյանի հուշակավոր «Վահան հաւատոյ»-ի բնագիրը:

ե) Udienze di nostro Signore (Udienze) — այս ֆոնդը ընդգրկում է 252 հատոր (1666—1895 թթ.):

Արխիվում պահվում են նաև առանձին խոշորագույն հավաքածուներ: Դրանցից է Fondo di Vienna-ն (Վիեննայի ֆոնդը—74 հատոր), որը Հավատաստիւոս ժողովի դիվան է բերվել Վիեննայից 1925 թ., պապականության հայտնի պատմաբան, գիտական Պատտորի կողմից: Հայերի վերաբերյալ հետաքրքիր փաստաթղթեր կարելի է հանդիպել այս ֆոնդի բազում հատորներում:

Վերոհիշյալ շարքերից որոշ հավելվածներում ևս պահվում են եզակի փաստաթղթեր, այսպես՝ *Miscellanea Varie* — 31 հատոր [այս ֆոնդում, vol. XI ff. 121 r v տե՛ս Իսրայել Օրու և Սյունյաց մելիքների նամակը Հոռմի պապին՝ Հայաստանի ազատագրության վերաբերյալ], *Miscellanea Generali* — 35 հատոր, *Miscellanea Diverse* — 35 հատոր:

Նորագույն շրջանի՝ 1892—1922 թթ. պատմության վերաբերյալ նյութերը ցուցակագրված են և պահվում են որոշակի կոդերի տակ և այն ճշտելու համար պետք է սկզբում այն գտնել համապատասխան *Rubriche*-ի տակ: Այս բաժնում Հայոց պատմության նորագույն շրջանի մասին հետաքրքիր տեղեկատվություն են պարունակում *Delegati Apostolici...; Eretici, Scismatici...; Impero Turco In Asia. Asia Minore, Smirne, Mesopotamin, Palestina, Terra Santa, Sirta; Russia; Ospedali, Orfanotrofi* (այստեղ են պահվում Հայկական Հարցի¹⁵, Մեծ եղեռնի և նրանից հետո, 1919 թ. Բենեդիկտոս XV պապի անունով կոչված, Պոլսում վերջինիս առաքելական նվիրակ Անջելո Մարիա Դուլլիի կողմից բացված որբանոցի վերաբերյալ Պրոպագանդային հասցեագրված փաստաթղթերը):

Վատիկանի այս երկու արխիվներում ընդհանուր առմամբ մոտ կես տարվա աշխատանքը հստակ ցույց տվեց, որ նրանք լինելով հայոց պատմության ուսումնասիրման աղբյուրների մի անսպառ և կարևոր շտեմարան, իրենց վրա պետք է սեփական հայագետ պատմաբանների ուղղորդությունը:

¹⁵ Վերջերս այս ֆոնդի փաստաթղթերի հիման վրա հատուկ քննության նյութ դարձավ Հոռմի Սուրբ Աթոռի վերաբերմունքը Հայկական Հարցի նկատմամբ (տե՛ս Mario Carollia. *La S. Sede e la Questione Armena* (1918--1922),-- „*Studium*“, (Bimestrale di cultura), 1996, 5, pp. 709--743).